ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24

ք. Երևան «15» 02. 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ս. Գևորգյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ուսուցման ծրագրերի հետ կապված** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է **29000000** (քսանինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինում և նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ»
Ք. Երևան, Կառավարական տուն 2	Ք.Երևան Տիգրան Մեծի 17
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ ----------	Հ/Հ 1570027790960100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02527624
Գլխավոր քարտուղար՝	**Ռեկտոր՝**
---------- **Հ. Հակոբյան**	---------- **Ս. Գևորգյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » 02 2024թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության					
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	80521100/505	Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	Վերապատրաստման ծառայության մատուցումը նախատեսվում է իրականացնել հետևյալ չափանիշներին համապատասխան: **I. Ընդհանուր պայմաններ.** Ծառայությունը նախատեսում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում՝ 7 ուսումնական խմբերում, ինչպես նաև ուսումնական ծրագրերում ընդգրկված առնվազն 1 թեմայով վեբինարի/դասախոսության տեսագրության պատրաստում: Աշխատանքային լեզուն հայերենն է: Ծառայության մատուցումը (դասընթացների կազմակերպումը) ներառում է հետևյալ աշխատանքային փուլերը. ա/ ընդհանուր նախապատրաստական *(տե՛ս. Բաժին II)* բ/ առկա վերապատրաստման դասընթացների անցկանցման Երևանում *(տե՛ս Բաժին III)* գ/ վկայականների հանձնման: Վերապատրաստման փուլը իր հերթին բաղկացած է երկու բովանդակային մասից. 1) Ուսումնական 7 ծրագրից, որն իրականացվում են դասընթացների միջոցով. 2) արտալսարանային ուսումնական և մշակութային միջոցառումների մեկ միասնական ծրագրից: **II. Ընդհանուր նախապատրաստական** աշխատանքն ուղղված է առկա դասընթացների կազմակերպման ուղղությամբ:	դրամ	1	29000000	Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու 20-րդ օրացույցային օրվանից սկսած մինչև 250 օրացույցային օրը ներառյալ/բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայության մատուցումը սկսել ավելի

			Առկա դասընթացների կազմակերպատնտեսական կողմը նախատեսում է. ա. վերապատրաստման դասընթացների կազմակերպման նախապատրաստում (դասախոսների ընտրություն, վարձատրություն, համակարգող անձնակազմ), բ. արտալսարանային ծրագրի նախագծում (մշակութային ծրագրի մշակում և իրագործում, ուղեվարներ (գիդեր), տոմսերի ձեռքբերում), գ. կեցության ապահովում դ. սնունդ, սուրճ-դադարներ, բացման-փակման արարողության պլանավորում ե. Տրանսպորտի ապահովում զ. ուսումնական տարածքի ապահովում, է. Գրասենյակային ծախսեր (պատճենահանում, վկայականների տպագրություն, գրենական պիտույքներ և այլ). ը. Հայտատուների և մասնակիցների հետ ընթացիկ կապի իրականացում՝ ըստ անհրաժեշտության: Վերապատրաստման առկա դասընթացներն անցկացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու 20-րդ օրացույցային օրվանից սկսած մինչև 250 օրացույցային օրը ներառյալ/ բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայության մատուցումը սկսել ավելի շուտ (միջոցառման անցկացման ժամկետները հստակեցնել պատասխանատու ստորաբաժանման հետ) Առկա վերապատրաստումը նախատեսվում է առավելագույն 60 մասնակցի համար, որոնցից շուրջ 40 օգտվում է գիշերակացից: Մասնակից ուսուցիչների թիվը կարող է 60-ից ավելի լինել, եթե գիշերակացով հայտատու մասնակից ուսուցիչների թիվը փաստացի պակաս է 40-ից: Կեցությունից զատ ծրագրային բոլոր ծախսերն իրականացվում են բոլոր մասնակիցների հաշվարկով: Ծրագրին լրացուցիչ հայտատուների կողմից դասընթացներին մասնակցությունը կարող է բերվել ազատ ունկնդիրների ձևով՝ տարբեր կամ մեկ ուսումնական խմբերում ազատ հաճախելիությամբ: Ազատ ունկնդիրների ծրագրում, այլ պայմանների մասով ներգրավվածության չափը և ձևը սահմանում է Կազմակերոպությունը՝ դրանց մասին Պատվիրակության տեղեկացնելով: Ազատ ունկնդիրները կարող են ստանալ տեղեկանք՝ վերապատրաստման դասընթացներին որպես ազատ ունկնդիր մասնակցելու մասին՝ Կազմակերպության համար ընդունելի պայմաններով: Մասնակից ուսուցիչների ընտրությունն իրականացվում է Պատվիրատուի կողմից: Մասնակից ուսուցիչների հայտագրումն կարող է իրականացվել Պատվիրատուի կամ Կազմակերպության կողմից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկատներում, ձևով և բովանդակությամբ: Մասնակից ուսուցիչների անվանացանկը՝ ըստ ուսումնական խմբերի, Պատվիրատուն տրամադրում է Կատարողին վերապատրաստման 1-ին օրվանից առնվազն **15 աշխատանքային օր շուտ**: Մինչև վերապատրաստման մեկնարկն				շուտ

			անվանացանկում կարող են կատարվել անվանական փոփոխություններ: Ուսուցիչների կողմից խմբերի ընտրության հարցում փոփոխությունները թույլատրելի են Կազմակերպության համար ընդունելի պայմաններով, սակայն մեկ ծրագրից ոչ պակաս, քան 60% ժամաքանակը լրացնելու պարագայում: Պատվիրատուի կողմից անվանացանկը Կազմակերպությանը տրամադրելուց հետո ընթացիկ կապը մասնակիցների հետ իրականացնում է Կազմակեպությունը: Վերապատրաստման ծրագրի պաշտոնական բացման և փակման արարողությունները կազմակերպվում են Կատարողի կողմից՝ Պատվիրատուի հետ համատեղ: Բացման արարողության հայտագրի նախագիծը ներկայացվում է Պատվիրատուին վերապատրաստման մեկնարկից առնվազն **3 աշխատանքային օր առաջ**: Նույն ժամկետն է գործում նաև փակման արարողության դեպքում: Ծառայության մատուցումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. թիվ 1246-Ն հրամանով հաստատված «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման մասին» կարգին համապատասխան: Կատարողի կողմից ստեղծված համակարգող անձնակազմը պատասխանատու է ուսումնական ծրագրի անխափան իրագործման համար: Անձնակազմի ներկայացուցիչն ուղեկցում է մասնակից ուսուցիչներին բոլոր կրթամշակութային միջոցառումների ժամանակ: Հետևում է մասնակիցների հաճախելիությանը: Համակարգող անձնակազմի կողմից օրվա ժամանակացույցը և շաբաթական դասացուցակը ներկայացվում է Պատվիրատուին մինչև դասընթացների մեկնարկը: Հաջորդ աշխատանքային շաբաթվա դասացուցակը ներկայացվում է Պատվիրատուին և մասնակից ուսուցիչներին ոչ ուշ քան նախորդող շաբաթվա շաբաթ օրը: Վերապատրաստման դասընթացների կազմակերպումը նախատեսում է նաև համացանցային որևէ հարթակի առկայություն, որի միջոցով կկատարվի տեղեկատվության տրամադրում, ուսումնական նյութերի փոխանցում և արխիվացում, ինչպես նաև աշխատանքից ելնելով այլ անհրաժեշտ գործողություններ (օր.՝ մասնակիցների հետ կապ, տվյալների շտեմարանի կազմում, հիմնական վիճակագրության ապահովում և այլն). **III. Վերապատրաստման դասընթացներ** Վերապատրաստման դասընթաներն ընթանալու են տարբերակված յոթ ուսումնական ծրագրերով. «Ա» Ուսուցում մանկապարտեզում «Բ» Ուսուցում մեկօրյա դպրոցում «Գ» Տարրական ուսուցում «Դ» Հայոց լեզվի և գրականության դասավանդում «Ե» Հայոց պատմություն և մշակույթի պատմություն «Զ» Պարարվեստ «Է» Տնօրենների վերապատրաստում Խմբերի ուսումնական ծրագրերը ներկայացված են հավելվածում: Ծրագրում ներկայացված ժամաքանակը կարող է լրացվել կա՛մ ուսումնական վայրում՝ լսարանային պայմաններում, կա՛մ արտագնա գործնական պարապմունքների				

			վայրում, կա՛մ թանգարանային ուսուցման ձևաչափով: Ուսումնական ծրագրի Ժամաքանակի մինչև 12%-ը կարող է լրացվել հեռավար ձևաչափով (սփյուռքահայ դասախոսների դեպքում): Հեռավար ձևաչափով անցկացվող պարապմունքները ձայնագրվում են: Ձայնագրություններն արխիվացվում են այլ ուսումնական նյութերի հետ միասին: Մասնակիցների անվանացանկը ձևավորելուց հետո մասնակիցների համար Կազմակերպությունը ստեղծում է ֆեյսբուքյան փակ խումբ, մեսսենջերի խումբ, ինչպես նաև What'sApp-ում խումբ/խմբեր՝ ըստ նպատակահարմարության: Վերապատրաստումների մեկնարկից 1 օր առաջ մասնակցի էլեկտրոնային հասցեով, մեսսենջերային խմբին և այլ նախընտրած կապի միջոցով ուղարկվում է նախնական անհրաժեշտ տեղեկությունները ծրագրի առաջին օրվա հայտագրի, հետագայում տեղեկությունները և ուսումնական նյութերը ստանալու եղանակի և այլ կազմակերպչական հարցերի մասին տեղեկատվությունը: Ուսուցչին կարող է տրամադրվել նաև առանձին ուղեցույց՝ վերապատրաստումների ընթացքի մասին, որում արտացոլված կլինի մասնակցելու համար ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, հղումները և կապի միջոցները: Մինչև ծրագրի մեկնարկը և ծրագրի ընթացքում Կազմակերպությունը ապահովում է դասախոսների տեքստերի, մեթոդական ուղեցույցների և մասնակից ուսուցիչների համար երաշխավորվող ուսումնական նյութերի առկայությունը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Արխիվավորված ուսումնական նյութերը պետք է հասանելի լինեն ուսուցիչներին նաև ծրագրի ավարտից հետո: Կազմակերպությունը հոգում է նաև դասախոսների դասավանդման նյութին համապատասխան անհրաժեշտ գրենական պիտույքների, նյութերի բազմացման և տեխնիկական սպասարկման հարցը: Ուսումնական ծրագիրն ամփոփվում է մասնակից ուսուցիչների խմբակային զեկույցներով: Զեկույցների բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է Կազմակերպության կողմից: Բացի հավելվածում ներկայացված ուսումնական ծրագրերով սահմանված պարապմունքներից՝ վերապատրաստման ծրագրի բովանդակային կողմը ներառում է. ա/ իր սկզբում և վերջում պաշտոնական բացման և փակման արարողություններ, բ/ արտալսարանային ուսումնական և մշակութային, ճանաչաղական միջոցառումներ: Կազմակերպությունը կարող է առաջարկել փոփոխություններ՝ յուրաքանչյուր ուսումնական ծրագրում մինչև 10%-ը՝ Պատվիրատուի համաձայնությամբ: Արտալսարանային ուսումնական և ճանաչողական միջոցառումները նպատակաուղղված են այլընտրանքային մեթոդներով լրացնելու դասընթացների միջոցով իրագործվող ուսումնական ծրագիրը, ծանոթացնելու մասնակցին Հայաստանի Հանրապետության կրթամշակութային կյանքին: Միջոցառումների շարքը պարտադիր պետք է ներառի. 1 հանդիպումներ՝ կրթամշակութային կամ հասարակական գործիչների հետ.				

			2 շրջայցեր. 3 այցելություններ պատմամշակութային և տեսարժան վայրեր, թատրոններ, թանգարաններ, մասնակցություն միջոցառումներին: Արտալսարանային ծանրաբեռնվածությունը չի ներառվում պարտադիր ուսումնական ծանրաբեռնվածության մեջ: Երևանի ներսում արտալսարանային միջոցառումները կազմակերպվում են ուսումնական օրերին և շաբաթ կամ կիրակի օրերին: Շրջայցերը կազմակերպվում են շաբաթ կամ կիրակի օրերին՝ 6 ժամից ոչ պակաս և 12 ժամից ոչ ավելի տևողությամբ: Արտալսարանային միջոցառումների ընդհանուր քանակը ըստ միջոցառման տեսակների հետևյալն է. 1) թանգարաններ՝ առնվազն 4 2) այլ մշակութային և կրթամշակութային միջոցառումներ՝ առնվազն 4 3) շրջայցեր՝ 6, որից Սբ. Էջմիածին շրջայցը պարտադիր է: 4) այլ հանդիպումներ առնվազն 5, որից 3-ը՝ առաջարկվում և ապահովվում են Պատվիրատուի կողմից: Արտալսարանային ուսումնական և մշակութային ծրագիրը մշակվում է Կազմակերպության կողմից և համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Արտաուսումնական և մշակութային ծրագրի նախագիծը ներկայացվում է Կազմակերպության կողմից դասընթացների մեկնարկից **առնվազն 5 օր առաջ**: Այդ ժամանակ կարող է ներկայացվել ծրագրի միայն 80%-ը: Հանդիպումների և մշակութային միջոցառումների (թանգարաններ, փառատոններ, հանդիպումներ) ցանկը և ժամանակացույցը կարող է փոփոխությունների ենթարկվել նաև վերապատրաստման ժամանակահատվածում: Բոլոր փոփոխությունները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ: Պատվիրատուի կողմից ծրագիրը համակարգող աշխատակիցներն կարող են այցելել բոլոր խմբերի բոլոր դասաժամերը և արտալսարանային միջոցառումները: Անհրաժեշտության դեպքերում Կազմակերպությունը արձագանքում է Պատվիրատուի լիազորությունների շրջանակներում առաջացած ուսուցիչների հարցերին և տալիս պարզաբանումներ, կատարում է արդյունավետության բարձրացմանն ուղղված ընթացիկ փոփոխություններ: **IV. Դասախոսական կազմ** Ուսումնական ծրագիրն ապահովող դասախոսական կազմն ընտրվում է Կազմակերպության կողմից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելով: 7 ուսումնական ծրագրում ընդգրկված մասնագետների առնվազն 60%-ը պետք է ունենա գիտական աստիճան՝ մասնագիտական կամ մանկավարժական ոլորտում: Դասախոսական կազմի առնվազն 20%-ը պետք է հանդիսանան դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, աշխատանքային տետրերի և այլ հիմնական ու օժանդակ նյութերի հեղինակներ: Նախապատվությունը պետք է տրվի սփյուռքի հետ աշխատանքի փորձ ունեցողներին: Ծրագրում պետք է ընդգրկվեն հեղինակային ծրագրեր իրագործող համապատասխան մասնագետներ սփյուռքից՝ ուսումնական ծրագրերում արձանագրված նվազագույն չափով: Նրանց թիվը կարող է տատանվել 3-7 հոգի:				

			Կազմակերպությունն վերապատրաստման մեկնարկից **20 օր առաջ** Պատվիրատուին է ներկայացնում դասավանդող անձնակազմի մասին նախնական տվյալները: Դասախոսների վարձատրությունը պետք է հաշվարկվի նվազագույնը՝ 5000 դրամի՝ 1 դասաժամ (հարկերը հանած) չափով: **V. Առաջադրանքներ** Առաջադրանքների ծավալի, տրամադրման, հավաքագրման և ստուգման հարցում Կազմակերպությունը առաջնորդվում է դասախոսների կողմից սահմանված նպատակահարմարությամբ: **VI. Կեցություն** Կացարանը պետք է գտնվի Երևան քաղաքում: Այն պետք է ունենա առնվազն 40 անձ տեղավորելու հնարավորություն: Սենյակները պետք է լինեն հարմարավետ և նախատեսված լինեն առավելագույնը 3 մասնակցի համար: Սենյակներում պետք է լինեն սառնարան, սանհանգույց, լողարան, օդորակիչ և անլար համացանցի հնարավորություն: Սենյակները պետք է ապահովված լինեն շուրջօրյա սառը և տաք ջրով: Կացարանի վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուին ներկայացվում է Կազմակերպության կողմից ծրագրի մեկնարկից **20 աշխատանքային օր առաջ** : Կացարանի մասին տեղեկությունները ներառվում են ուսուցչին տրվող ուղեցույցում (տեղեկատվական փաթեթում) և տրամադրվում են մասնակցին Պատվիրատուի կողմից անվանացանկը ստանալուց հետո **2-օրյա ժամկետում:** **VII. Սնունդ** Նախաճաշն ու ընթրիքը մատուցվում են կացարանում մնացողներին՝ օրացուցային բոլոր օրերին (27 օր՝ առավելագույնը 40 անձի համար): Ճաշը մատուցվում է բոլոր մասնակից ուսուցիչներին, այդ ժամերին դասավանդողներին և տեղում համակարգող անձնակազմին: Շրջայցերին մասնակցող ուսուցիչների թիվը ճշտվում է նախապես՝ ընթացիկ աշխատանքային շաբաթվա ընթացքում: Շրջայցերի օրերին ճաշը տրվում է ուսուցիչներին և ուղեկցողներին: Այն կարող է լինել նաև չոր մթերաբաժնի ձևով՝ նախատեսված ճանապարհին ճաշելու համար, կամ կազմակերպվել ճանապարհային սննդի որևէ կետում: Պարապմունքների օրերին երկար դասամիջոցին կազմակերպվում է սուրճ-դադար, որին մասնակցում են ուսուցիչները, դասավանդողները և համակարգող անձնակազմը: Ծրագրի բացման և փակման օրերին կազմակերպվում է ֆուրշեթ՝ ուսուցիչների, դասավանդողների, հյուրերի և համակարգող անձնակազմի համար (առավելագույնը 90 անձ): Մեկ անձին հասանելիք սննդամթերքի քանակն ընդունվում է սահմանված չափորոշիչներով, իսկ ճաշացանկում ներառված հիմնական ուտեստները չպետք է կրկնվեն առնվազն 4 օրվա ընթացքում: Ընդ որում. *Նախաճաշը պետք է ներառի.*				

			տաք ըմպելիք (օրինակ՝ թեյ, լուծվող սուրճ, կակաո), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), կարագ, պանիր, ջեմ, քաղցրավենիք (օրինակ՝ թխվածքաբլիթ, խմորեղեն), կաթնամթերք (օրինակ՝ թթվասեր, յոգուրտ, կաթնաշոռ), տաք ուտեստ (օրինակ՝ շիլա/բրինձ, հերկուլես, ձավարեղեն, խաշած ձու, նրբերշիկ, ձվածեղ, սենդվիչներ): *Ճաշը պետք է ներառի.* սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան, լիմոնադ), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), պանիր, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), աղցան (օրինակ՝ վինեգրետ, մայրաքաղաքային, կաղամբով, կորեական), տաք ապուր (օրինակ՝ սպաս, ապուր, բորշ), տաք ուտեստ (օրինակ՝ մսով տոլմա, կիևյան կոտլետ կամ հավ խավարտով (կարտոֆիլ, խորոված բանջարեղեն, փլավ, կանաչ լոբի), մսով և կարտոֆիլով սոուս), մայոնեզ, կետչուպ: *Ընթրիքը պետք է ներառի.* սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), պանիր, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), աղցան (օրինակ՝ վինեգրետ, մայրաքաղաքային, կաղամբով, կորեական), տաք ուտեստ (օրինակ՝ կարտոֆիլ, խորոված բանջարեղեն, նրբաբլիթ մսով, կարկանդակ, դդմիկով կոտլետ, սենդվիչներ): *Չոր մթերաբաժինը (նախատեսված հեռավոր շրջայցերի օրերին ճաշելու համար) պետք է ներառի.* սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան, լիմոնադ), սենդվիչներ (օրինակ՝ տավարի մսի կոտլետով և կարտոֆիլով, կիսաապխտած երշիկով և կարտոֆիլով, հավով և կարտոֆիլով), հացը պանրով, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), մայոնեզ, կետչուպ: *Ֆուրշետը պետք է ներառի (նախատեսված է բացման և փակման արարողությունների օրերին) .* միրգ, խմորեղեն, գինի կամ շամպայն, կանապե, սառը ըմպելիքներ, սուրճ սև, սուրճ լուծվող, թեյ: *Սուրճի ընդմիջումը պետք է ներառի.* Սուրճ, թեյ, միրգ, խմորեղեն կամ թխվածքաբլիթ, հյութ կամ սառը ըմպելիք: Մեկամսվա ճաշացուցակը և սնունդ մատակարարող կազմակերպության մասին տեղեկությունները Պատվիրատուին ներկայացվում են Կազմակերպության կողմից ծրագրի մեկնարկից **առնվազն 20 աշխատանքային օր առաջ**: **VIII. Տրանսպորտ** Տրանսպորտային միջոցները պետք է լինեն բարեկարգ, մաքուր, համապատասխանեն տեխնիկական անվտանգության կանոններին, ունենան օդորակիչ: Տրանսպորտային միջոցներն անհրաժեշտ են. 1. Երևան քաղաքում փոխադրումներ իրականացնելու համար հետևյալ դեպքերում. ա. արտալսարանային ծրագրի իրագործման ընթացքում, բ. գործնական պարապմունքների կազմակերպման համար, գ. կացարանից ուսումնական վայր, եթե կացարանը չի գտնվում է 5-7 րոպե քայլելու հեռավորության վրա: Յուրաքանչյուր օրվա վերջում երթուղին ավարտվում է կեցության վայրում: 2. Երևանից դուրս շրջայցերի ընթացքում՝ մշակութային ծրագրով սահմանված երթուղիներով: Փաստացի տեղերի թիվը ճշտվում է ընթացիկ				

			աշխատանքային շաբաթվա ընթացքում: **IX. Ուսումնական տարածք** Պարապմունքների համար նախատեսված ուսումնական տարածքը պետք է ունենա առնվազն 8 լսարան: Լսարանները պետք է լինեն չոր, լուսավոր և ունենան օդորակիչներ, հագեցված լինեն անլար համացանցային կապով: Ուսումնական տարածքը պետք է տեխնիկապես զինված լինի առնվազն երկու երևակով, համակարգչով: Տարածքում պետք է լինի պատճենահանման հնարավորություն: Տարածքը պետք է ունենա պարասրահ (կամ պարերի պարապմունքների համար հարմար տեղ), մագնիտոֆոն և դաշնամուր, ինչպես նաև ակտային դահլիճ՝ առնվազն 80 անձի համար: Ուսումնական տարածքում պետք է լինի ազատ օգտագործման սանհանգույց և մաքուր խմելու ջուր՝ պարապմունքների ողջ ժամանակահատվածում: Ուսումնական տարածքում պետք է նախատեսված լինի առանձին սենյակ՝ դասախոսական կազմի համար՝ համակարգչով, տպիչով, հեռախոսով և համացանցի հնարավորությամբ: Պատվիրատուն պետք է տեղեկացված լինի վերապատրաստման ընթացքում շահագործվող ուսումնական տարածքի մասին Կազմակերպության կողմից ծրագրի մեկնարկից **20 աշխատանքային օր առաջ:** **X. Ընթացիկ և ամփոփիչ վիճակագրություն** Ծրագրի մեկնարկից և ավարից հետո Պատվիրատուին տրամադրվում է մասնակիցների և ազատ ունկնդիրների խմբագրված և լրամշակած ցանկը՝ ըստ ուսումնական խմբերի: Ամփոփ ձևով անհրաժեշտ է ունենալ տեղեկություններ յուրաքանչյուր ուսուցչի պարապմունքներին մասնակցության քանակի կամ տոկոսի վերաբերյալ: Հաշվի առնելով այն, որ վերապատրաստման մասին վկայականը Պատվիրատուի կողմից տրվելու է միայն 60% պարապմունքներին մասնակցելու դեպքում, Կազմակերպությունը հետևում է ընթացիկ վիճակագրությանը, տեղյակ է լինում բացակայության պատճառներին: **XI. Մշտադիտարկում** Ծրագրի մշտադիտարկումն իրականացվում է Պատվիրատուի և Կազմակերպության կողմից: Պատվիրատուի կողմից իրականացվող մշտադիտարկումն իրականացվում է սույն բնութագրին համապատասխան և պայմանագրով սահմանված իրավունքների շրջանակներում: Ծրագրի ընթացքում Կազմակերպությունն ապահովում է պարապմունքների և ծրագրի գնահատում ուսուցիչների կողմից: Գնահատումը պետք է լինի շաբաթական և ամփոփիչ՝ ամբողջ ծրագրի վերաբերյալ: Ամփոփիչ հարցման արդյունքում Կազմակերպությունը ձևակերպում է առաջարկություններ և դիտարկումներ, որոնք ներկայացնում է Պատվիրատուին: Ընթացիկ գնահատման արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ընթացիկ ծրագրային փոփոխություններ կատարելու համար՝ հնարավարությունների և խելամտության սահմաններում:				

			Հարցման ձևերը և բովանդակությունը սահմանվում են Կատարողի կողմից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված: **XII. Վկայականներ** Ծրագրի վերջում տպագրվում են ուսուցիչների մասնակցության մասին վկայականներ, որոնց բովանդակությունը սահմանվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. թիվ 1246-Ն հրամանով հաստատված «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման մասին» կարգով և համաձայնեցվում է Պատվիրատուի հետ վերապատրաստման ծրագրի ավարտից առաջ: Լրացուցիչ վկայականներում պետք է նշված լինի այն խումբը, որի ուսումնական ծրագրով կատարվել է վերապատրաստումը՝ տվյալ մասնակցի պաշտոնի նշումով (ուսուցիչ, մանկավարժ, տնօրեն, փոխտնօրեն, ուսմասվար): Վկայականները հանձնվում են մասնակիցներին պաշտոնական փակման արարողության ժամանակ: **XIII. Այլ հարցեր** Ելնելով նախորդ տարիների ուսուցիչների առաջարկություններից, վերապատրաստման դասընթացների ավարտից հետո վերապատրաստմանը մասնակցած ուսուցիչների համար սեպտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ հանրակրթական և լրացուցիչ կրթության հաստատություններում կազմակերպվում են վարպետաց կամ ցուցադրական դասեր բոլոր խմբերի մանսակիցների համար՝ ընդամենը՝ 2 հատ: Դասերը կազմակերպվում են Կազմակերպության կողմից՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված: **XIV. Ամփոփիչ հաշվետվություն** Ամփոփ բովանդակային հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկություններ և հավելվածներ. 1. Դասընթացների կազմակերպման ընդհանուր նկարագրությունը, 2. Տեղեկություններ մասնակցած ուսուցիչների և վկայական ստացած ուսուցիչների մասին 3. Շաբաթական և ավարտական մշտադիտարկման արդյունքները՝ ներառյալ դիտողություններն ու առաջարկությունները, առցանց հարցման դեպքում՝ նաև հղումները: 4. Տեղեկություններ ուսումնական ծրագրում կատարված ընդհանուր փոփոխությունների մասին 5. Տեղեկություններ արտալսարանային/արտաժամյա ծրագրի վերաբերյալ 6. Ուսումնական ծրագրերով նախատեսված արձանագրությունները 7. 1 վեբինարի տեսագրություն 8. Տեղեկություններ սեպտեմբերին նախապատրաստվող վարպետաց դասերի մասին Կատարողի կողմից ուշադրությանը արժանի համարվող այլ տեղեկություններ և հավելվածներ:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ----------
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան
հիմնադրամ»
Ք.Երևան Տիգրան Մեծի 17
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570027790960100
ՀՎՀՀ 02527624

Ռեկտոր՝

---------- **Ս. Գևորգյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 15 » 02 2024 թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ենթակա է վճարման պետական բյուջեից, համապատասխան ֆինանսական միջոցներ Նախատեսվելու դեպքում, ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբերի	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80521100/505	**Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ**													29000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ----------
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան
հիմնադրամ»
Ք.Երևան Տիգրան Մեծի 17
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570027790960100
ՀՎՀՀ 02527624

Ռեկտոր՝

---------- **Ս. Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ.